

# ՆԵՐՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Հայաստանին հասած լուրերու բնոյթն ու անոնց գտած հետաքրքրութիւնը մեծապէս պայմանաւորուած են Ղարաբաղով: Առիկա անշուշտ չի նշանակեր թէ հայաստանեան նախափորձային աշխատանքները արձանագրելու արժանի տուեալներ չունին: Մամուլի հատ ու կենտ նշումներ եւ մանաւանդ այցելուներու վկայութիւններ յաճախ կը սեւեռէին ներքին կեանքին մասին արտայայտուած դժգոհութիւններու: անոնց վստահութեամբ կը վերաբերէր անտեսական կացութեան: Ժողովուրդին գնելու կարողութեան ու շուկայի գիներուն միջեւ ոչ թէ օրէ օր, այլ ժամէ ժամ անդունդը կը խորանար ու շատ շատերու սեղաններէն երկար ժամանակի համար կը բացակայէին միտք, պրտուղը եւլն: Այս կացութեան մէջ վերջին ու ծանրագոյն հարուածը կը նկատուէր հացի տաղնապը որ կատարեալ խուճապ ստեղծած էր ժողովուրդին մօտ: ամառը անցած էր արդէն ու ցուրտին անխուսափելի ու փորձուած հեռանկարին հետ տանելի ըլլալու ամէն հանդամանքէ զուրկ էին հացի հերթերը: Այս վերջին պարագան դառնութեան շեշտ մըն ալ կ'ունենար երբ հացի տաղնապը բացատրելու ջանքը ալիւրի շղոյութեամբ չէր սահմանափակուեր ու կը խօսուէր նաեւ շահատակութիւններու, մաքիական դործունէութեան մասին:

Հայաստանի ներքին կեանքին վստահութեամբ մէկ այլ ցաւն ալ յանցադործութիւններու մեծցող համեմատութիւնն էր: այս պարագան մտահոգիչ էր անով որ զինեալ անհակահիշուելի տարրերու ներկայութեան կը վկայէր, քանի որ յանցադործութիւններու ջախջախիչ մեծամասնութիւնը զինեալ արարքներէ կը բաղկանար: Ամէն վերադարձողի, ամէն սրտցաւ արտայայտութեան կ'ընկերանար բնականօրէն «ինչո՞ւ»ներու, «ի՞նչպէս»ներու շարանը: Եւ աւելորդ է ըսել թէ դուրսէն զխողին համար անկարելի էր դոհացուցիչ պատասխան դոնել անոնց:

«ՌԱԿ»ի պաշտօնաթերթ «Ազգ» օրաթերթը (օրաթերթ՝ Սեպ. 1-էն ի վեր) Սեպ. 4-ի թիւին մէջ համառօտ անդրադարձ մը կու տայ փշոտ այս հարցերու բնազաւառի վստահութեամբ անդրադարձին նախարար Վանօ Սիրադեղեանի նախորդ օրուան մամուլի ասուլիսէն:

Այդ անդրադարձին մէջ բան չըսուիր տնտեսական սուր կացութեան մասին: յայտնապէս, ուշադրութեան կեդրոնը դրուուած են յացադործութիւնները ու շարաշահումները: Առաջինին մասին նախարարին կեցուածքը, տպաւորութիւններով փոխանցուած նեղութիւնը չի բաժնէր: երկրին ներքին դործերու մարդը այնքան աղէտալի եւ անկառավարելի չի նկատեր, որքան շատ ու շատ այլ մարդեր: Դժուար է գիտնալ որ այս դիրքորոշումը որոշ հանդատութիւն մը կու տա՞յ տաղնապած տեղացիներու, թէ միայն կը ծառայէ անկառավարելի այլ բնազաւառներու մասին կարծիքները վատթարացնելու: Ամէն պարագայի մէջ, Վ. Սիրադեղեանի պարզած պատկերն ալ հացադործութիւններ չունի: այս տարի յանցադործութիւնները աւելցած են 47 տոկոսով: ասոր հետ պէտք է նկատի ունենալ այն կէտը որ աւելցած է նաեւ «բացայայտուած յանցադործութիւններ»ու թիւը: Զարագործութեան յաւելումի պատճառը նախարարը կը բացատրէ բնակչութեան մօտ գէնքի քանակութեան աճով: կ'ըսէ թէ 300-100 դէնք գրուուած է, սակայն ատիկա բան չի փոխեր բնդ հանուր պատկերէն:

Իսկ աւելի վտանգաւոր կը նկատէ Վ. Սիրադեղեան, մաքիային դոյութիւնը երկրին մէջ: կ'ըսէ թէ 10-15 նման կառոյցներ կան որոնց դէմ պայքարը շատ դժուար է ներկայ պայմաններով:

Յայտնապէս Երեւանի մասին վիճարկումներու հիմնական նիւթերէն մէկը կ'ըլլան մայթերուն վրայ հաստատուած սեղան - խանութները ուր սկրրուներով արտասահմանեան ապրանք կը ծախուի, արտասահմանեան գիներով: Յաճախակի են անոնց դէմ բարձրացած բողոքները որոնց մէջ դժգոհութիւն կը յայտնուի նաեւ իշխանութեան դէմ ու մանաւանդ քաղա-

քապետութեան ու ներքին գործերու վարչութեան, նախարարը կ'ըսէ թէ հարկը չի տեսներ պայքարելու այդ ձեռներէցնէրուն դէմ, որոնք մեծամասնութեամբ Երիտասարդներ են, այլ ամէն ձեւով կը փորձեն փողոցային օրէ օր կարգաւորուող այդ առեւտուրին եկամուտները ծառայեցնել համազգային խնդիրներու եւ մանաւանդ պաշտպանութեան:

Նշուած սա համառօտ կէտերուն սրբազրութեան համար նախարարը անհրաժեշտ կը նկատէ ներքին նախարարութեան մէջ քառորային եւ կառույցի փոփոխութիւններ կատարել. իր կարծի-

քով «հին քառորերի անցեալը խիստ խոցելի է» եւ «հին կառույցներում նոր քառորերը շատ արագ կը փճանան»:

Կայ վերջապէս նիւթական միջոցներու հարցը որով միայն կարելի են այս եւ աշխատանքի ձեւի այլ փափաքելի փոփոխութիւնները: Ի՞նչ արդիւնաւոր աշխատանք կարելի է յուսալ ասպահովութեան պաշտօնեայէ մը որ ընդամէնը 1200 ռուբլի աշխատավարձ կը ստանայ: Եւ ծանօթ են Հայաստանի կարելիութիւնները: Կեդրոնական հղօր իշխանութեան մըն ալ բացակայութեան, ի՞նչպէս մտածել օրինակ, կաշառակերութեան դէմ ազդեցիկ

պայքարի մասին, ալ ո՛ւր մնաց մաֆիային . . . :

Եւ ըսել որ զլիսաւորարար Ղարաբաղի պատերազմով ծանրացած հայաստանեան առօրեային մէջ, ամէն օր չէ որ ներքին հարցերը մամուլի էջեր կամ սինակներ կը դրաւեն: Հայաստանի իշխանութեան ու ժողովուրդին համար տոկարու փորձաքարը մէկը միւսէն աւելի «պարարտ» մարդեր ունի որոնք յաճախ կը դանուին բացասական փոխադարձ ազդեցութիւններու աքցանին մէջ:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ